ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.05.2019
342-11

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Արտակ Զեյնալյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զեյնալյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակում ՀՀ կառավարությունը անձնական տվյալների պաշտպանության ոլորտում մի շարք պարտավորություններ է ստանձնել, որոնցից մեկի համաձայն՝ 2018թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ պետական կառավարման բոլոր մարմինները պետք է մշակեն եւ ընդունեն անձնական տվյալների պաշտպանության ներքին ընթացակարգեր: Ո՞ր պետական պառավարման մարմիններն են կատարել ԵՄ առջեւ ստանձնած այս պարտավորությունը:
2. Նույն ծրագրի շրջանակում պետական կառավարման մարմինները նաև պարտավորվել են մշակել, ընդունել և իրենց պաշտոնական կայքերում հրապարակել անձնական տվյալների պաշտպանության ներքին ընթացակարգերի վերաբերյալ իրավական ակտ: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ վերոհիշյալ իրավական ակտերը պետական կառավարման որեւէ մարմնի պաշտոնական կայքում հրապարակված չեն: Ինչո՞ւ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան